# ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓ (ՍՔՈՐ) ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը ներկայացնում է, թե «Կրեդո Ֆինանս» ՈՒՎԿ ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ինչպես է օգտագործում հաճախորդների վարկային պատմությունը և վարկային գնահատականը (սքորը) վարկ տրամադրելիս:

**Ի՞նչ է վարկային պատմությունը**
Վարկային պատմությունը տեղեկություն է Ձեր վերցրած վարկերի և այլ դրամական պարտավորությունների մասին: Այն ցույց է տալիս՝

- որքան վարկ եք ունեցել,
- ինչպես եք կատարել վճարումները,
- եղել են արդյոք ուշացումներ,
- արդյոք երաշխավոր եք հանդիսացել այլ անձանց վարկերի համար:

Այս տվյալները հավաքվում և պահպանվում են վարկային բյուրոյի կողմից:

Ընկերությունը Ձեր համաձայնությամբ հարցում է կատարում «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին՝ Ձեր վարկային պատմությունը ստանալու համար: Դուք կարող եք ինքնուրույն տեսնել Ձեր վարկային պատմությունը www.acra.am կայքում (վերջին 5 տարիների տվյալներով):

**Ի՞նչ է վարկային գնահատականը (սքորը)**
Սքորը թվային գնահատական է, որը ցույց է տալիս, թե որքան հավանական է, որ Դուք կկատարեք Ձեր վարկային պարտավորությունները ժամանակին:

Սքորի վրա հիմնականում ազդում են՝

- Ձեր վարկային պատմությունը (արդյոք ունեցել եք ուշացումներ),
- Ձեր աշխատանքը և եկամուտը,
- արդեն ունեցած վարկերի չափը (վարկային ծանրաբեռնվածությունը),
- այլ տվյալներ (ներառյալ միջազգային FICO սքորը):

Այս տեղեկությունների հիման վրա Ընկերությունը որոշում է՝ տրամադրել վարկ, թե ոչ, և ինչ պայմաններով:

**Եթե Ձեր վարկային պատմության մեջ կա սխալ**
Դուք կարող եք դիմել՝

- «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ին, կամ
- այն ֆինանսական կազմակերպությանը, որը փոխանցել է տվյալը:

Եթե տվյալը փոխանցվել է Ընկերության կողմից, կարող եք կապ հաստատել՝

- էլեկտրոնային փոստով,
- 060 465555 հեռախոսահամարով,
- կամ այցելել ցանկացած մասնաճյուղ:

**Ինչպե՞ս բարելավել վարկային պատմությունը և սքորը**

- Միշտ կատարեք վճարումները ժամանակին (նույնիսկ մեկ օրվա ուշացումը կարևոր է),
- հնարավորինս նվազեցրեք Ձեր վարկերի և երաշխավորությունների քանակը,
- աշխատեք նվազեցնել վարկային ծանրաբեռնվածությունը,
- խուսափեք հաճախակի նոր վարկերի դիմելուց:

Վարկային պատմության (այդ թվում՝ դրա թերի կամ սխալ լինելու) և/կամ Վարկային ամփոփ (սքոր) գնահատականի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ներկայացված է հետևյալ կայքերի համապատասխան բաժիններում.

- www.acra.am – Կապ և Աջակցություն – Հաճախ տրվող հարցեր - https://acra.am/%d5%af%d5%a1%d5%ba-%d6%87-%d5%a1%d5%bb%d5%a1%d5%af%d6%81%d5%b8%d6%82%d5%a9%d5%b5%d5%b8%d6%82%d5%b6/%d5%b0-%d5%bf-%d5%b0/
- www.abcfinance.am – Սկիզբ - Կյանքի իրավիճակներ – Վարկային պատմություն. Հակիրճ ամենակարևորի մասին - https://www.abcfinance.am/lifesituations/credit-history.html
- www.abcfinance.am – Սկիզբ - Նորություններ – Ի՞նչ է ՍՔՈՐԸ և ինչպե՞ս այն բարելավել - https://www.abcfinance.am/news/news_varkayinscore.html